


Մուսաննա Սարգսյան

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՄԱՏԵՐ

9-րդ դասարանի
ավարտական քննության
նախապատրաստվելու համար

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԹԵՄԱՏԵՐ



Սարգսյան Սուսաննա Գևորգի
Աշխարհագրություն: Թեստեր. 9-րդ դասարանի ավարտական
քննությանը նախապատրաստվելու համար/
Սուսաննա Սարգսյան. - 46 էջ
Եր.: Հեղինակային հրատարակություն, 2017.

Լրամշակված հրատարակություն

Ձեռնարկի նպատակն է օգնել հանրակրթական դպրոցների 9-րդ
դասարանի աշակերտներին՝ «Աշխարհագրություն» առարկայի
ավարտական քննությունից առաջ ստուգելու իրենց գիտելիքները,
ինչպես նաև կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ
ուղղությամբ

«ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ» առարկայի

9-րդ դասարանի ավարտական քննության ուղեցույց

2016-17 ուստարվա ավարտական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Աշխարհագրություն» առարկայի ուսումնական ծրագիրը և դպրոցական դասագրքերը:

1. ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄՈՏԱԿՈՐ ՂԱՄԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ/հ	ԲԱԺԻՆ	Համամաս- նություն (%-ով)
1	Ընդհանուր տեղեկություններ Երկիր մոլորակի մասին	3
2	Աշխարհագրական թաղանթը և նրա ոլորտային կառուցվածքը	17
3	Մայրցամաքներ և օվկիանոսներ	14
4	Հասարակական աշխարհագրություն	14
5	Տարածաշրջաններ և երկրներ	26
6	Հայաստանի աշխարհագրություն	26
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		100

2. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ավարտական քննական թեստը բաղկացած է 35 առաջադրանքից:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ են 1-22-րդը: Այս առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4 տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը: Դրանց պատասխանելիս ընտրած պատասխանի համարը թեստում պետք է վերցնել շրջանակի մեջ, որից հետո «X» նշանով նշել պատասխանների ձևաթղթում:


Օրինակ՝ առաջադրանք 7. Նշված երկրներից ո՞րն է գտնվում եվրոպայում:

1) Չինաստանը

2) Բրազիլիան

3) Ֆրանսիան

4) Ալժիրը



Օրինակ՝ առաջադրանք 8. Ո՞ր շարքում է տրված մարզերի և մարզկենտրոնների ճիշտ համապատասխանությունը:

1. Արագածոտն ա. Արտաշատ

2. Լոռի բ. Իջևան

3. Տավուշ գ. Աշտարակ


4. Արարատ դ. Վանաձոր

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ

2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

4) 1-դ, 2-ա, 3-բ, 3-գ




Կարծ պատասխան պահանջող առաջադրանքներ են 23-32-րդը:

Այս առաջադրանքների բաց թողած տեղում, գծի վրա, պետք է գրել պատասխանը, որը կարող է լինել բառ, բառակապակցություն կամ թիվ:

Օրինակ՝ առաջադրանք 24. Ինչպե՞ս է կոչվում երկրի խորքից դուրս ժայթքած, ջրային գոլորշիներն ու գազերը կորցրած մագման:

Պատասխան՝ լավա:

Այս տիպի առաջադրանքների պատասխանները ևս պետք է անցկացնել պատասխանների ձևաթղթի մեջ:



Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են 33-35-րդը:

33-րդ խնդիր-առաջադրանքի լուծման ողջ ընթացքը՝ քայլերի գրանցումով, հաշվարկներով, ստացած պատասխանով, **34-րդ** և **35-րդ** առաջադրանքների հիմնավորումները մանրամասնորեն պետք է գրել առաջադրանքներից հետո բաց թողած տեղում:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանն ուղղելու 3 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի, իսկ 1-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:

3. ԳՆԱՅԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի, կարճ և ընդարձակ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:

4. ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

1. **ընտրովի պատասխանով** առաջադրանքներ՝ 22 միավոր,
2. **կարճ պատասխանով** առաջադրանքներ՝ 10 միավոր,
3. **ընդարձակ պատասխանով** առաջադրանքներ՝ 3 միավոր:

ԹԵՍՏ 1


1. Քանի՞ ժամային գոտիների է բաժանված երկրագունդը:

- 1) 3
- 2) 15
- 3) 24
- 4) 30

2. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ջուգահեռականները քարտեզի և գլոբուսի վրա տարված գծեր են, որոնք Հյուսիսային բևեռը միացնում են Հարավային բևեռին:
- 2) Տիեզերքից Հյուսիսային բևեռին նայելիս՝ Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է ժամացույցի վլաքի պտույտի հակառակ ուղղությամբ:
- 3) Ցերեկվա և գիշերվա հերթափոխության գլխավոր պատճառը Երկրի պտույտն է Արեգակի շուրջը:
- 4) Իր առանցքի շուրջը պտտվելու հետևանքով Երկիրը բևեռային շրջաններում «փքվել» է, իսկ հասարակածի մոտ՝ սեղմվել:

3. Նկարում հարթավայրի ո՞ր տեսակն է պատկերված ? տառով:



- 1) դաշտավայր
- 2) բարձրավայր
- 3) սարահարթ
- 4) ցածրավայր

4. Տրվածներից ո՞րն է աշխարհի ամենամեծ կղզին:

- 1) Նոր Գվինեա
- 2) Մադագասկար
- 3) Նոր Զելանդիա
- 4) Գրենլանդիա

5. Կլիմայի այն տիպը, որը բնորոշվում է մեղմ ու խոնավ ձմեռներով և տաք ու չոր ամառներով, կոչվում է.

- 1) ցամաքային
- 2) միջերկրածովային
- 3) ծովային
- 4) մուսսոնային

6. Տրված «մայրցամաք-անապատներ» զույգերից ո՞րն է սխալ:

- 1) Հարավային Ամերիկա - Լիբիական և Նուբիական
- 2) Եվրասիա - Գոբի և Տակլա Մական
- 3) Ավստրալիա - Մեծ Վիկտորիա և Մեծ ավազային
- 4) Աֆրիկա - Սահարա և Նամիբ

7. Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են (լեռնագագաթ, գետ, ջրվեժ) գտնվում Հյուսիսային Ամերիկայում:

- 1) Մոնբլան, Դանուբ, Վիկտորիա
- 2) Մակ Քինլի, Կոլորադո, Նիագարա
- 3) Ակոնկագուա, Միսիսիպի, Անխել ✓
- 4) Էլբրուս, Մուրբեյ, Իգուասու ✓

8. Հարավային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Արևմտյան ափերի մոտով անցնում է Բրազիլական տաք հոսանքը:
- 2) Ամենամեծ գետը Կոլումբիան է:
- 3) Երկրագնդի ամենախոնավ մայրցամաքն է:
- 4) Կենտրոնական Ամերիկայում խաղաղ օվկիանոսի առափնյա նեղ շերտով տարածվում է Կալահարի անապատը:

9. Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:


- 1) Հյուսիս-արևմուտքում տարածվում են Ատլասի երիտասարդ լեռները:
- 2) Ամենաբարձր լեռնագագաթը Կիլիմանջարոն է:
- 3) Ծայր հյուսիսային և հարավային շրջանները գտնվում են բարեխառն կլիմայական գոտում:
- 4) Զամբեզի գետի վրա է գտնվում Վիկտորիա ջրվեժը:

10. Տրված 3 պնդումները պետական կառավարման ո՞ր ձևին են բնորոշ:

- Պետության ղեկավարի պաշտոնը ցմահ է և փոխանցվում է ժառանգաբար:
 - Պետության ղեկավարն ունի անսահմանափակ իշխանություն:
 - Այդպիսի կառավարման ձև ունեն Օմանը և Սաուդյան Արաբիան:
- 1) բացարձակ միապետություն
 - 2) սահմանադրական միապետություն
 - 3) նախագահական հանրապետություն
 - 4) խորհրդարանական հանրապետություն

11. Տրված սեռատարիքային բուրգը ո՞ր երկրին է բնորոշ:

Տարիքային խմբերը



- 1) Իրան
- 2) Բրազիլիա
- 3) Հնդկաստան
- 4) Ֆրանսիա

12. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ծովափնյա շրջաններից դեպի ցամաքի խորքը բնակչության խտությունը աճում է:
- 2) Աշխարհի բնակչության բարձր խտություն ունեցող երեք արեալներից մեկն է Գյուսիսային Աֆրիկան:
- 3) Աշխարհի բնակչության գաղթերը (միգրացիաները) գերազանցապես պայմանավորված են բնական պայմաններով:
- 4) Երկրագնդի բնակչության մոտ 80%-ը բնակվում է ծովի մակարդակից մինչև 500 մ բարձրություն ունեցող տարածքներում:

13. Տրված «պետություն - տնտեսության մասնագիտացման ճյուղ» զույգերից ո՞րն է սխալ:

- 1) Իրան - ածխարդյունաբերություն
- 2) Գերմանիա - մեքենաշինություն
- 3) Չինաստան - պողպատածուլություն
- 4) Թուրքիա - թեթև արդյունաբերություն

14. Ո՞ր զույգ երկրներն են առաջատար նավթի պաշարներով:

- 1) Գերմանիա և Մեծ Բրիտանիա
- 2) Սաուդյան Արաբիա և Իրան
- 3) Բրազիլիա և Կանադա
- 4) Ճապոնիա և Չինաստան

15. Ո՞ր զույգ քաղաքներն են գտնվում Գերմանիայում:

- 1) Բեռն և Լյուքսեմբուրգ
- 2) Մայնի Ֆրանկֆուրտ և Համբուրգ
- 3) Մանչեստր և Մարսել
- 4) Միլան և Լիոն

16. ԱՄՆ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Էներգետիկան հենվում է սեփական վառելիքաէներգետիկ ռեսուրսների օգտագործման վրա:
- 2) Պողպատի ծուլման ձեռնարկությունները տեղաբաշխված են Մեծ լճերի շրջանում և հումքի ներկրման նավահանգիստներում:
- 3) Ածխի հանույթի գերակշիռ մասը կատարվում է Մեքսիկական ծոցի ծանծաղուտից:
- 4) Պղնձածուլությունն առավելապես զարգացած է երկրի արևմտյան նահանգներում:

17. Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Արևմուտքից սահմանակցում է Ուզբեկստանին և Թուրքմենստանին:
- 2) Արևելյան ափերը ողողվում են ճապոնական ծովի ջրերով:
- 3) Հարուստ է քարածխի պաշարներով:
- 4) Ղյուսիս-արևմուտքում տարածվում է Մեծ Չինական հարթավայրը:

18. Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Երկրի կազմի մեջ են մտնում Սիցիլիա և Կորսիկա կղզիները:
- 2) Ըստ պետական կառավարման ձևի նախագահական հանրապետություն է:
- 3) Բնակչության մեծամասնությունը դավանում է քրիստոնեության բողոքական ուղղությունը:
- 4) Բնակչության միատարր ազգային կազմ ունեցող երկիր է:

19. «Օգտակար հանածո-հանքավայր» համապատասխանությունների տրված շարքերից ո՞րն է ճիշտ:

- | | |
|-----------------------|------------|
| 1. երկաթաքար | ա. Սվարանց |
| 2. ոսկի | բ. Քաջարան |
| 3. պղնձամոլիբդեն | գ. Թեժեռ |
| 4. նեֆելինային սիենիտ | դ. Սոթք |

- 1) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 3) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ

20. Տրված երկրներից որի՞ հետ չի սահմանակցում Հայաստանի Հանրապետությունը:

- 1) Վրաստան
- 2) Ռուսաստանի Դաշնություն
- 3) Իրան
- 4) Ադրբեջան

21. ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Բնակչության թվաքանակը 1920-90-ական թթ. անընդհատ նվազել է:
- 2) Ազգային կազմով միատարր երկիր է:
- 3) Բնակչության խտության ցուցանիշն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:
- 4) Բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք:

22. Գեղարքունիքի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Տարածքի մեծությամբ ՀՀ մարզերից ամենամեծն է:
- 2) Հարուստ է ոսկու և շինանյութերի պաշարներով:
- 3) Բուսաբուծության առաջատար ճյուղերից է կարտոֆիլագործությունը:
- 4) ՀՀ մյուս մարզերի համեմատությամբ ունի նպաստավոր տրանսպորտային աշխարհագրական դիրք:

23. Լրացնել բաց թողնված բառը:

Տվյալ վայրին բնորոշ միանման եղանակների բազմամյա կրկնությունը կոչվում է _____:

24. Բնութագրումով որոշել մայրցամաքը:

Այդ մայրցամաքն ամբողջովին գտնվում է արևելյան կիսագնդում: Մայրցամաքի արևելյան ափի երկայնքով ձգվում է հին քայքայված լեռնաշղթա, իսկ արևմտյան մեծ մասը ձևավորվել է հնագույն պլատֆորմի վրա: Մայրցամաքի բուսական և կենդանական աշխարհում շատ են էնդեմիկ տեսակները: Ո՞րն է այդ մայրցամաքը:

Պատասխան՝ _____:

25. Լրացնել բաց թողնված բառը:

Ընդհանուր ծագմամբ, ինչպես նաև ժառանգաբար փոխանցվող արտաքին հատկանիշներով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խումբը կոչվում է _____:

26. Լրացնել բաց թողնված բառը:

Լատինական Ամերիկայում ամենատարածված լեզուները երկուսն են՝ իսպաներենը, որը պետական լեզու է երկրների մեծ մասում, և _____ ը՝ Բրազիլիայում:

27. Բնութագրումով որոշել պետությունը:

Եվրոպական այդ պետությունը սահմանադրական միապետություն է: Մայրաքաղաքը ծովային խոշոր նավահանգիստ է և համաշխարհային նշանակության ֆինանսական կենտրոն: Արդյունաբերության ավանդական ճյուղերից են ածխարդյունաբերությունն ու սև մետաղածուլությունը: Ո՞րն է այդ պետությունը:

Պատասխան՝ _____:

28. Ո՞ր երկիրն է աշխարհի առաջատարը եգիպտացորենի մշակությամբ:

Պատասխան՝ _____:

29. Լրացնել բաց թողնված բառը:

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասով զուգահեռականի ուղղությամբ ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը: Այստեղ առանձնանում է _____ լեռնաշղթան, որը ձգվում է Մեծ Մասիսից դեպի արևմուտք:


30. Բնութագրումով որոշել քաղաքը:

ՀՀ այդ քաղաքը գտնվում է Վայոց ձորում: Հայտնի է որպես առողջարանային կենտրոն: Այդ քաղաքը նշանավոր է նաև հանքային ջրերով: Ո՞րն է այդ քաղաքը:

Պատասխան՝ _____:

31. Քարտեզի վրա Ա տառով ո՞ր գետն է նշված:

Պատասխան՝ _____:



32. Քարտեզի վրա Բ տառով ո՞ր ջրամբարն է նշված:

Պատասխան՝ _____:

33. Տվյալ երկրի երկաթաքարի պաշարները կազմում են 81 մլն տ, իսկ տարեկան արդյունահանումը՝ 2,7 մլն տ: Որոշել ռեսուրսաապահովվածությունը արդյունահանման տարեկան չափը չփոխվելու դեպքում:

34. Հիմնավորել, թե ինչու սավանաների և նոսրանտառների բնական զոնայում ամառը տաք է ու խոնավ, իսկ ձմեռը՝ չոր ու տաք:


35. ՀՀ կլիմայի բնորոշ առանձնահատկություններից են լեռնահովտային քամիները: Հիմնավորել, թե ինչպես են առաջանում լեռնահովտային քամիները:

ԹԵՍՏ 2

1. Հասարակածին զուգահեռ և երկրագունդը գոտևորող երևակայական շրջանագծերը կոչվում են.

- 1) միջօրեականներ
- 2) զուգահեռականներ
- 3) հորիզոնականներ
- 4) ուղեծրեր

2. Նկարում ո՞ր տառով է նշված հարավային արևադարձը:



- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

3. Ինչպե՞ս է կոչվում արտածին ուժերի ազդեցությամբ երկրի մակերևույթային ապարների քայքայման, մանրացման և վերափոխման գործընթացը.

- 1) էրոզիա
- 2) տեղատարում
- 3) տեղատվություն
- 4) հողմահարում

4. Տրված «օվկիանոս-ծով» զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Հնդկական - Կարմիր
- 2) Ատլանտյան - Օխոտի
- 3) Հյուսիսային սառուցյալ - Բերինգի
- 4) Խաղաղ - Բարենցի

5. Ընտրել «բնական զոնա - բնորոշ բուսատեսակ» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|-------------|--------------|
| 1. տափաստան | ա. քարաքոս |
| 2. անապատ | բ. բադրաբ |
| 3. սավանա | գ. ուղտափուշ |
| 4. տունդրա | դ. սիզախոտ |

- 1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
- 2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 3) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 4) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա

6. Տրված «մայրցամաք-թերակղզի» զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Եվրասիա - Սոմալի
- 2) Աֆրիկա - Յուկատան
- 3) Ավստրալիա - Առնհեմլենդ
- 4) Հարավային Ամերիկա - Կալիֆոռնիա

7. Տրված կլիմայական գոտիներից ո՞րն է բացակայում Ավստրալիայում:

- 1) հասարակածային
- 2) արևադարձային
- 3) մերձարևադարձային
- 4) բարեխառն

8. Դյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ամբողջությամբ գտնվում է արևելյան կիսագնդում:
- 2) Ամենացածր կետը Ասսալի իջվածքն է:
- 3) Մայրցամաքի արևմտյան մասում ձգվում են Ապալաչյան լեռները:
- 4) Ամենաքիչ տեղումները դիտվում են Մեծ Ավազան սարահարթի զոգավորություններում:


9. Եվրասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ամենացածր կետը Մերձկասպյան դաշտավայրում է:
- 2) Ամենամեծ հարթավայրը Մեծ Չինականն է:
- 3) Բարեխառն գոտում մեծ ձգվածության պատճառով առանձնացվում է կլիմայական չորս մարզ:
- 4) Գետային ցանցն առավել խիտ է մայրցամաքի ներքին շրջաններում:

10. Ինչպե՞ս են անվանում նեգրոիդ և մոնղոլոիդ ռասաների խառնածիններին:

- 1) մետիս
- 2) սամբո
- 3) մալագասի
- 4) մուլատ

11. Նկարում պատկերված է երկրագնդի բնակչության բաշխումը (%) ըստ ծովից ունեցած հեռավորության: Ո՞ր հեռավորության գոտուն է համապատասխանում Ա տառը:



- 1) մինչև 50 կմ
- 2) 50-200 կմ
- 3) 200-500 կմ
- 4) 500-1000 կմ

12. Ո՞ր զույգ երկրներն են միապետություններ:

- 1) Իտալիա և Ֆրանսիա
- 2) Իսպանիա և Մեծ Բրիտանիա
- 3) ԱՄՆ և Ռուսաստան
- 4) Գերմանիա և Չինաստան

13. Ո՞ր զույգում տրված ռեսուրսներն են համարվում սպառվող-վերականգնվող:

- 1) բուսական և կենդանական ռեսուրսներ
- 2) քամու և արևի էներգիա
- 3) նավթ և քարածուխ
- 4) երկաթաքար և մոլիբդեն

14. Աշխարհի գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Դաշտավարության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն տեխնիկական մշակաբույսերը:
- 2) Կակաոյի համաշխարհային բերքի կեսից ավելին տալիս են Զարավային Ամերիկայի պետությունները:
- 3) Վուշի հայրենիքը Զնդկաստանն է:
- 4) Կաուչուկենու մշակության գլխավոր տարածաշրջանը Զարավարևելյան Ասիան է:

15. Տրված զույգերից որի՞ պետությունները չեն մտնում Զարավարևմտյան Ասիա տարածաշրջանի կազմի մեջ:

- 1) Իրան և Թուրքիա
- 2) Պակիստան և Ուզբեկստան
- 3) Իրաք և Սաուդյան Արաբիա
- 4) Լիբանան և Զորդանան

16. Գերմանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 2) Քիմիական արդյունաբերությամբ աշխարհի առաջատար երկրներից է:
- 3) Էլեկտրաէներգիայի մեծ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:
- 4) Գյուղատնտեսության մեջ գերակշռում է բուսաբուծության բաժինը:

17. Թուրքիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Բոքսիտի և քրոմիտի պաշարներով աշխարհի առաջատար երկրներից է:
- 2) Տնտեսության ավանդական զարգացած ճյուղերից է թեթև արդյունաբերությունը:
- 3) Ամենախոշոր քաղաքը մայրաքաղաք Անկարան է:
- 4) Երկրի խոշոր նավահանգիստներից են Ստամբուլը, Իսքենդերունը և Իզմիրը:

18. Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Տարածքի մեծությամբ առաջինն է Արևմտյան Եվրոպայում:
- 2) Մեծ Բրիտանիայից բաժանվում է Ջիբրալթարի նեղուցով:
- 3) Արևմտյան Եվրոպայի այլ երկրների համեմատությամբ խիտ է բնակեցված:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

19. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ջրադեցնում է մոտ 30 հազ.կմ² մակերես:
- 2) Գտնվում է Ալպ-Հիմալայան լեռնային գոտու կենտրոնական մասում:
- 3) Հարավ-արևելքում սահմանակցում է Փոքրասիական բարձրավանդակին:
- 4) Հյուսիսում՝ Սև ծովի ափին զուգահեռ տարածվում են Հայկական Տավրոսի լեռները:

20. Արարատյան դաշտում գրունտային ջրերի բարձրացումը և արագ գոլորշիացումը ո՞ր հողերի առաջացման պատճառն է դարձել.

- 1) լեռնային սևահող
- 2) լեռնաշագանակագույն
- 3) աղուտ-ալկալի
- 4) մարգագետնատափաստանային

21. ՀՀ «մետաղածուլության ենթաձյուղ - մետաղածուլական կենտրոն» գույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) մոլիբդենի արտադրություն - Վանաձոր
- 2) պղնձի արտադրություն - Երևան
- 3) ալյումինի արտադրություն - Քաջարան
- 4) ոսկու արտադրություն - Արարատ

22. ՀՀ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Տարաբնակեցման համակարգն ընդգրկում է 58 քաղաքային բնակավայր:
- 2) Բնակչության ավելի քան 50 %-ը կենտրոնացած է մինչև 1000 մ բարձրության գոտում:
- 3) Երկրորդ խոշոր քաղաքը Վանաձորն է:
- 4) Մարզերից առավել խտաբնակ են Լոռին և Տավուշը:

23. Բնութագրումով որոշել լիճը:

Այդ լիճը գոյացել է Արևելաաֆրիկական Մեծ բեկվածքում և ունի տեկտոնական ծագում: Լիճը խորությամբ աշխարհում երկրորդն է: Ո՞րն է այդ լիճը:

Պատասխան՝ _____:

24. Բնութագրումով որոշել բնական զոնան:

Այդ բնական զոնան հիմնականում տարածվում է մերձհասարակածային կլիմայական գոտու սահմաններում: Այդտեղ գերակշռում է խոտային բուսականությունը: Հարուստ է կենդանական աշխարհը: Տարածվում են կարմրագորշ և կարմրադեղին հողերը: Ո՞րն է այդ բնական զոնան:

Պատասխան՝ _____:

25. Լրացնել բաց թողնված բառը:

Եթե ծնելիության ցուցանիշը գերազանցում է մահացությանը, և տեղի է ունենում բնակչության թվի աճ, վերարտադրության ռեժիմը կոչվում է _____:

26. Ո՞ր երկիրն է աշխարհի առաջատարը բնական գազի պաշարներով:

Պատասխան՝ _____:

27. Բնութագրումով որոշել արդյունաբերության ճյուղը:

Արդյունաբերության այդ ճյուղն ունի բազմաթիվ ենթաճյուղեր ու արտադրատեսակներ: Այն համատարած տեղաբաշխում ունի: Ջարգացած երկրներում մեծ է ճյուղի նորագույն և գիտատար ենթաճյուղերի բաժինը, իսկ զարգացող երկրներում առավել մեծ կշիռ ունեն հին ու աշխատատար ենթաճյուղերը: Այդ ճյուղի զարգացման երեք խոշոր տարածաշրջաններն են Արևմտյան Եվրոպան, ԱՄՆ-ն և Արևելյան Ասիան: Ո՞րն է այդ ճյուղը:

Պատասխան՝ _____:

28. Բնութագրումով որոշել երկիրը:

Եվրոպական այդ երկրի արևմտյան ափերը ողողում են Տիրենյան ծովի ջրերը: Երկիրը հարուստ է մարմարի և սնդիկի պաշարներով: Բնակչության գերակշիռ մասը դավանում է կաթոլիկություն: Աշխարհում առաջինն է խաղողի բերքով: Ո՞րն է այդ երկիրը:

Պատասխան՝ _____:

29. Բնութագրումով որոշել լեռնաշղթան:

Այդ լեռնաշղթան միջօրեականի ուղղությամբ ձգվում է Ամուլսարից մինչև Արաքսի հովիտ: Լեռնաշղթայի ամենաբարձր գագաթն իր բարձրությամբ մեր հանրապետության սահմաններում գիջում է միայն Արագածին: Ո՞րն է այդ լեռնաշղթան:

Պատասխան՝ _____:

30. Բնութագրումով որոշել մարզը:

ՀՀ այդ մարզը հարևան ոչ մի երկրի հետ չի սահմանակցում: Այդտեղ տարածված են հրաբխային սարավանդներն ու լեռնագագաթները: Մարզում կա 7 քաղաքային բնակավայր: Մարզը հարուստ է ռելիեֆի ռեսուրսներով: Բացառիկ դեր ունի էներգետիկայի բնագավառում: Ո՞րն է այդ մարզը:

Պատասխան՝ _____:

31. Քարտեզի վրա Ա տառով ո՞ր գետն է նշված:

Պատասխան՝ _____:



32. Քարտեզի վրա Բ տառով ո՞ր քաղաքն է նշված:

Պատասխան՝ _____:


33. Որոշել հասարակածի վրա գտնվող երկու կետերի միջև ամենակարճ հեռավորությունը (կմ-ով), եթե դրանցից մեկը գտնվում է արմ. ե. 10° միջօրեականի, մյուսը՝ արլ. ե. 30° միջօրեականի վրա:

34. Հիմնավորել, թե ինչու օդի ջերմաստիճանի օրական տատանումները ջրավազանների վրա փոքր են, իսկ ցամաքների վրա՝ մեծ:

35. Հիմնավորել, թե ինչու Հայաստանի Հանրապետության գետերն ունեն հոսքի անկայուն ռեժիմ:

ԹԵՍ 3

1. Նկարում Ձ կետի աշխարհագրական կոորդինատներն են.



- 1) հս. լ. 10° , արլ. ե. 20°
- 2) հվ. լ. 20° , արմ. ե. 20°
- 3) հվ. լ. 20° , արլ. ե. 20°
- 4) հս. լ. 20° , արմ. ե. 40°

2. Երկրի իր առանցքի շուրջը պտույտի հետևանքով տեղի է ունենում.

- 1) տարվա եղանակների հերթափոխումը
- 2) գիշերվա և ցերեկվա հերթափոխումը
- 3) հասարակածից դեպի բևեռներ բնական զոնաների հերթափոխումը
- 4) ըստ բարձրության լանդշաֆտային գոտիների հերթափոխումը

3. Ո՞ր պնդումն է ճիշտ:

Անտարկտիդան՝

- 1) սառույցով ծածկված կղզի է
- 2) սառցասար է (այսբերգ)
- 3) մայրցամաք է
- 4) կղզիախումբ է

4. 200-500 մ բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրը կոչվում է.

- 1) բարձրավայր
- 2) դաշտավայր
- 3) սարահարթ
- 4) սարավանդ

5. Չմռանը ո՞ր օդային զանգվածներն են թափանցում մերծհասարակածային կլիմայական գոտի:

- 1) հասարակածային
- 2) արևադարձային
- 3) բարեխառն
- 4) արկտիկական

6. Տրված «գետ-օվկիանոս» զույգերից ո՞րն է սխալ:

- 1) Ենիսեյ – Դյուսիսային սառուցյալ
- 2) Գանգես – Դնդկական
- 3) Դանուբ – Ատլանտյան
- 4) Մակենգի – Խաղաղ

7. Ո՞ր բնական զոնան է տարածվում Աֆրիկայի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան շրջաններում:

- 1) հասարակածային մշտադալար խոնավ անտառների
- 2) սավանաների և նոսրանտառների
- 3) անապատների և կիսաանապատների
- 4) մերձարևադարձային մշտականաչ կոչտատերև անտառների և թփուտների

8. Հարավային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Մայրցամաքի կլիմայի ձևավորման վրա առավել մեծ է Խաղաղ օվկիանոսի ազդեցությունը:
- 2) Տարածքի մեծ մասն ընկած է արևադարձային կլիմայական գոտում:
- 3) Օրինոկո գետի վտակի վրա է գտնվում աշխարհի ամենաբարձր ջրվեժը՝ Անիսելը:
- 4) Մայրցամաքի ամենաջրառատ գետը Պարանան է:


9. Եվրասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Դյուսիսային Ամերիկայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 2) Ափերը ողողում են բոլոր չորս օվկիանոսները:
- 3) Ամենացածր կետը Մերձկասպյան ցածրավայրում է:
- 4) Ամենաերկար գետը Յանգզին է:

10. Պետական կառավարման այն ձևը, որի դեպքում պետական իշխանությունը փոխանցվում է ժառանգաբար, կոչվում է.

- 1) միապետություն
- 2) հանրապետություն
- 3) նահանգապետություն
- 4) կոնֆեդերացիա

11. Քարտեզի վրա ? տառով նշված տարածքներում բնակչությունն առավելապես ո՞ր ոլորտում է զբաղված:



- 1) արդյունաբերություն
- 2) գյուղատնտեսություն
- 3) տրանսպորտ
- 4) ծառայություններ

12. Ո՞ր զույգ երկրներին է բնորոշ բնակչության բարձր բնական աճը:

- 1) Իրան և Ադրբեջան
- 2) Ճապոնիա և Ավստրալիա
- 3) Վրաստան և Ֆրանսիա
- 4) Ռուսաստան և Գերմանիա

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Թեստ 1		Թեստ 2		Թեստ 3		Թեստ 4		Թեստ 5	
Առաջադրանքի համարը	Առաջադրանքի համարը	Առաջադրանքի համարը	Պատասխանը	Առաջադրանքի համարը	Պատասխանը	Առաջադրանքի համարը	Պատասխանը	Առաջադրանքի համարը	Պատասխանը
1	3	1	2	1	3	1	2	1	1
2	2	2	2	2	2	2	3	2	3
3	1	3	4	3	3	3	4	3	2
4	4	4	1	4	1	4	4	4	2
5	2	5	2	5	2	5	1	5	1
6	1	6	3	6	4	6	3	6	4
7	2	7	1	7	4	7	4	7	3
8	3	8	4	8	3	8	2	8	2
9	3	9	3	9	3	9	1	9	3
10	1	10	2	10	1	10	3	10	4
11	4	11	1	11	2	11	2	11	3
12	4	12	2	12	1	12	1	12	2
13	1	13	1	13	4	13	3	13	4
14	2	14	4	14	3	14	4	14	1
15	2	15	2	15	2	15	1	15	1
16	3	16	2	16	3	16	3	16	3
17	3	17	3	17	3	17	4	17	3
18	4	18	1	18	4	18	2	18	2
19	4	19	2	19	1	19	1	19	3
20	2	20	3	20	3	20	2	20	1
21	1	21	4	21	1	21	3	21	1
22	4	22	2	22	2	22	3	22	4

Թեստ 1	Թեստ 2	Թեստ 3	Թեստ 4	Թեստ 5
23	23	23	23	23
24	24	24	24	24
25	25	25	25	25
26	26	26	26	26
27	27	27	27	27
28	28	28	28	28
29	29	29	29	29
30	30	30	30	30
31	31	31	31	31
32	32	32	32	32

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Թեստ 1		Թեստ 2	
Առաջադրանքի համարը	Պատասխանը	Առաջադրանքի համարը	Պատասխանը
23	կլիմա	23	Տանգանիկա
24	Ավստրալիա	24	սավանա
25	ռասա	25	ընդլայնված
26	պորտուգալերեն	26	Ռուսաստան
27	Մեծ Բրիտանիա	27	մեքենաշինություն
28	ԱՄՆ	28	Իտալիա
29	Հայկական Պար	29	Զանգեզուրի
30	Ջերմուկ	30	Կոտայք
31	Աղստև	31	Ողջի
32	Ախուրյանի	32	Սպիտակ

Թեստ 3		Թեստ 4	
Առաջադրանքի համարը	Պատասխանը	Առաջադրանքի համարը	Պատասխանը
23	Կարմիր	23	միջօրեական
24	Հյուսիսային Ամերիկա	24	ցամաքային
25	Մունբայ	25	դաշնային
26	հնդեվրոպական	26	տարաբնակեցում
27	Շվեյցարիա	27	Իտալիա
28	Չինաստան	28	Սաուդյան Արաբիա
29	Որոտան	29	Արփի
30	Տավուշ	30	Արագածոտն
31	Գուգարաց	31	Գեղամա
32	Արագածոտն	32	Տավուշ

Թեստ 5	
Առաջադրանքի համարը	Պատասխանը
23	պլատֆորմ
24	արևադարձային
25	բուդոյականություն
26	երկաթուղային
27	Մեքսիկական
28	Ֆրանսիա
29	ցամաքային
30	Շիրակ
31	Լոռու
32	Վայք

Պատասխանների ձևաթուղթ

Աշխարհագրություն

Եղբ ուշադիր

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելու համար ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրեք X նշանը (միևնույն սյունակում մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
Պատասխանի համարը	1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	1
	2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	2
	3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	3
	4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	4

	21	22	
Պատասխանի համարը	1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	3	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
	4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

Միայն մեկ վանդակում պատասխանները փոխելու տեղը

	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Պատասխանի համարը	1	<input type="checkbox"/>
	2	<input type="checkbox"/>
	3	<input type="checkbox"/>
	4	<input type="checkbox"/>

	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
Պատասխանի համարը	1	<input type="checkbox"/>
	2	<input type="checkbox"/>
	3	<input type="checkbox"/>
	4	<input type="checkbox"/>

Կարճ պատասխանով առաջադրանքներ

Առաջադրանքի համարը	23	<input type="text"/>	28	<input type="text"/>
	24	<input type="text"/>	29	<input type="text"/>
	25	<input type="text"/>	30	<input type="text"/>
	26	<input type="text"/>	31	<input type="text"/>
	27	<input type="text"/>	32	<input type="text"/>

Միայն մեկ վանդակում պատասխանը փոխելու տեղը

Փոխված պատասխանների քանակը

Լրացնում է ստուգողը

Ընդարձակ պատասխանով առաջադրանքների միավորները

33	34	35
1 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>	1 <input type="checkbox"/>

Հանձնաժողովի անդամներ՝

-
-

Հանձնաժողովի նախագահ՝

Միավորների գումարը	
Գնահատականը	

Ընդարձակ պատասխանով առաջադրանքներ

Թեստ 1	
Առաջադրանքի համարը	Պատասխանը
33	30 տարի
34	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ հիմնավորում՝ Սավանաների և նոսրանտառների բնական զոնան հիմնականում տարածվում է մերձհասարակածային կլիմայական գոտում, որտեղ կլիման սեզոնային է. ամռանը թափանցում են հասարակածային, իսկ ձմռանը՝ արևադարձային օդային զանգվածները: Հասարակածային օդային զանգվածների շնորհիվ սավանաների և նոսրանտառների բնական զոնայում ամռանը տաք է ու խոնավ, իսկ արևադարձային օդային զանգվածների շնորհիվ ձմեռը տաք է ու չոր:</p>
35	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ բացատրություն՝ ԴՂ-ում լեռնահովտային քամիներն առաջանում են լեռների և հովիտների անհավասարաչափ տաքացման պատճառով: Խորը հովտի պատերի միջև գտնվող օդը ցերեկը տաքանում է, իսկ գիշերը պաղում ավելի շատ, քան հարևան հարթավայրերում: Ջերմաստիճանների տարբերության հետևանքով ցերեկը հովտի ներսում առաջանում է օդի ավելի ցածր, իսկ գիշերը՝ ավելի բարձր ճնշում, քան հարթավայրերում: Օդի ճնշման արդյախի բաշխման հետևանքով ցերեկը հարթավայրից քամին ուղղվում է դեպի հովիտ, իսկ գիշերը հովտի լանջով հակառակ ուղղությամբ սուրում է դեպի հարթավայր:</p>

Թեստ 2	
Առաջադրանքի համարը	Պատասխանը
33	4440 կմ
34	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ հիմնավորում՝ ջուրը դանդաղ տաքանում և դանդաղ էլ սառչում է, իսկ ցամաքը արագ տաքանում և արագ էլ սառչում է, որի պատճառով օրվա ընթացքում ջրային տարածքների վրա ջերմաստիճանների տարբերությունը՝ ջերմաստիճանի տատանման լայնույթը փոքր է:</p>
35	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ հիմնավորում՝ ԴՂ գետերը սնվում են հիմնականում ձնհալքի, անձրևային ու ստորերկրյա ջրերով և սնունդից կախված՝ ունեն հոսքի անկայուն ռեժիմ: Գետերը հորդանում են առավելապես գարնանը՝ շնորհիվ ձնհալքի և անձրևների: Հորդացումն ավելի թույլ է աշնանը, իսկ ամռանը և ձմռանը գետերը խիստ ծանծաղում են:</p>

Թեստ 3

Առաջադրանքի համարը	Պատասխանը
33	2800 մ
34	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ հիմնավորում՝ Օղը թափանցիկ է, և Արեգակի ճառագայթներն ազատ անցնում են օդի միջով ու գրեթե չեն տաքացնում այն: Օղը տաքանում է երկրի մակերևույթից ստացած ջերմության հաշվին: Հետևաբար ամսնայ օրերին օդի առավելագույն ջերմաստիճանը լինում է կեսօրից 2-3 ժամ անց, երբ Արեգակի զենիթային դիրքից հետո էլ օղը շարունակում է տաքացած մակերևույթից ջերմություն ստանալ:</p>
35	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ հիմնավորում՝ ՀՀ գետերը լեռնային են, սկիզբ են առնում բարձր կամ միջին բարձրության լեռներից: Մակերևույթի լեռնային բնույթով պայմանավորված՝ գետերն ունեն հունի զգալի թեքություն և հոսքի մեծ արագություն: Ղրանք հոսում են նեղ ու խոր կիրճերով՝ շատ տեղերում առաջացնելով սահանքներ և ջրվեժներ: Հունի մեծ թեքությունների, սահանքների ու ջրվեժների առկայության պատճառով էլ ՀՀ գետերը նավարկելի չեն:</p>

Թեստ 4

Առաջադրանքի համարը	Պատասխանը
33	13 ⁹²
34	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ բացատրություն՝ Ցերեկը ցամաքն ավելի արագ է տաքանում, քան հարակից ջրային ավազանը: Ցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ցածր ճնշում: Ջրի վրա օդն ավելի սառն է, մթնոլորտային ճնշումը՝ ավելի բարձր, ուստի բրիզը փչում է ջրային ավազանից դեպի ավելի ցածր մթնոլորտային ճնշում ունեցող ցամաք: Գիշերը ցամաքն ավելի արագ է պաղում, քան հարակից ջրային ավազանը: Հետևաբար մթնոլորտային ճնշումն ավելի բարձր է ցամաքի վրա, և բրիզը փչում է ցամաքից դեպի հարակից ջրային ավազան:</p>
35	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ հիմնավորում՝ Կոնգո գետը հոսում է հասարակածային և մասամբ մերձհասարակածային կլիմայական գոտիների սահմաններում, որտեղ առատ տեղումները գրեթե անհրաժեշտություն չեն առաջացնում արհեստական ոռոգման համար:</p>

Թեստ 5

Առաջադրանքի համարը	Պատասխանը
33	630 մլն տ•կմ
34	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ հիմնավորում՝ Առավոտյան և երեկոյան ժամերին, երբ օդի ջերմաստիճանը կտրուկ նվազում է, ջրային գոլորշիները, սառչելով, այլևս չեն կարողանում բարձրանալ և կուտակվում են երկրամերձ շերտում՝ առաջացնելով մառախուղ: Այդ ժամերին ջրային ավազանների մոտ գոլորշիացումն ավելի մեծ է լինում, ուստի ջրային ավազանների մոտ հաճախ է մառախուղ դիտվում:</p>
35	<p>Պատասխանում պետք է ներկայացված լինի նմանատիպ հիմնավորում՝ Արարատյան դաշտում տիրապետող է անապատակիսամապատային լանդշաֆտը, որտեղ տեղումների միջին տարեկան քանակը 230-300 մմ է: Տեղումների սակավությանը պայմանավորված էլ այստեղ առանց արհեստական ոռոգման երկրագործությունն անհնար է:</p>

13. Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Մեքենաշինությունն աչքի է ընկնում բազմազան ճյուղային կառուցվածքով և արտադրատեսակների բազմազանությամբ:
- 2) Թեթև արդյունաբերությունն աշխատատար է և ունի համատարած տեղաբաշխում:
- 3) Քիմիական արդյունաբերությունը գիտատար ճյուղ է և առավելապես կենտրոնացված է զարգացած երկրներում:
- 4) Ծանր գունավոր մետաղաձուլությունն ունի լայն սպառում և կենտրոնացված է խոշոր բնակավայրերի մերձակայքում:

14. Տրված «մշակաբույս - առաջատար երկիր» զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) արևածաղիկ - Գերմանիա
- 2) վուշ - Յնդկաստան
- 3) բրինձ - Չինաստան
- 4) շաքարեղեգ - Ֆրանսիա

15. Ո՞ր զույգ քաղաքներն են գտնվում Ֆրանսիայում:

- 1) Թուրին և Փարիզ
- 2) Մարսել և Լիոն
- 3) Ռոտերդամ և Մյունխեն
- 4) Թուլուզ և Բիրմինգհեմ

16. Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) «Ժողովրդագրական պայթյունը» կանխելու նպատակով երկիրը վարում է բնակչության աճի կրճատման ժողովրդագրական քաղաքականություն:
- 2) Բնակչության թվաքանակով աշխարհի երկրորդ պետությունն է Չինաստանից հետո:
- 3) Երկրի տարածքում բնակվող մեծաթիվ ժողովուրդներից են թաթարները:
- 4) Ըստ պետական կառուցվածքի միացյալ (ունիտար) հանրապետություն է:

17. Հարավային Եվրոպայի վերաբերյալ տրված է 2 պնդում:

- Ա) Ընդերքը հարուստ է ծծմբի, սնդիկի, մարմարի պաշարներով:
- Բ) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը խոշոր եղջերավոր անասնապահությունն է:

Որոշել տրված պնդումների ճիշտ կամ սխալ լինելը:

- 1) Ա-ն և Բ-ն սխալ են
- 2) Ա-ն և Բ-ն ճիշտ են
- 3) Ա-ն ճիշտ է, Բ-ն՝ սխալ
- 4) Ա-ն սխալ է, Բ-ն՝ ճիշտ

18. Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ըստ պետական կառավարման ձևի խորհրդարանական հանրապետություն է:
- 2) Բնակչության տարիքային կազմում մեծ է երեխաների բաժինը:
- 3) Բնակչության մեծամասնությունը դավանում է քրիստոնեության ուղղափառ ուղղությունը:
- 4) Բարձր է բնակչության միջին խտությունը:

19. Ո՞ր լեռներն են հարավից եզրավորում Հայկական լեռնաշխարհը:

- 1) Հայկական (Արևելյան) Տավրոս
- 2) Փոքր Կովկաս
- 3) Արևելապոնտական
- 4) Հայկական Պար

20. ՀՀ կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Տարվա տաք կեսին հանրապետության տարածքում տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զնազվածները:
- 2) Ձմռանը բարձրադիր գոգավորություններում սովորաբար դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 3) Ամենաշատ տեղումները ստանում են ցածրադիր միջլեռնային գոգավորությունները:
- 4) Մթնոլորտային տեղումների առավելագույն քանակը դիտվում է մայիս-հունիս ամիսներին:

21. Ո՞ր զույգ քաղաքներն են մարզկենտրոններ:

- 1) Արմավիր և Արտաշատ
- 2) Վայք և Արարատ
- 3) Վանաձոր և Արուսյան
- 4) Կապան և Մասիս

22. ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Գյուղատնտեսական հողահանդակների կառուցվածքում գերակշռում են արոտավայրերը:
- 2) Հացահատիկային ցանքատարածություններում գերակշռում է գարին:
- 3) Դաշտավարության վերին սահմանը 2200 մ բացարձակ բարձրությունն է:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

23. Բնութագրումով որոշել ծովը:

Այդ ծովը ողողում է երկու մայրցամաքների ափեր: Մեծ գոլորշիացման պատճառով, ծովն աշխարհում ամենաաղին է: Ո՞րն է այդ ծովը:


Պատասխան՝ _____:

24. Բնութագրումով որոշել մայրցամաքը:

Այդ մայրցամաքի ափերը արևմուտքից ողողում են Խաղաղ, արևելքից՝ Ատլանտյան օվկիանոսի ջրերը: Մայրցամաքի արևելյան մեծ մասը ձևավորվել է համանուն պլատֆորմի վրա: Այդ մայրցամաքի ափերի մոտ է գտնվում աշխարհի ամենամեծ կղզին: Մայրցամաքում շատ են լճերը, որոնցից ամենամեծը Վերինն է: Ո՞րն է այդ մայրցամաքը:

Պատասխան՝ _____:

25. Քարտեզի վրա Ա տառով ո՞ր նավահանգիստն է նշված:



Պատասխան՝ _____:

26. Ո՞ր լեզվաընտանիքին է պատկանում հայերենը:

Պատասխան՝ _____:

27. Բնութագրումով որոշել պետությունը:

Արևմտաեվրոպական այդ պետությունը դաշնային հանրապետություն է: Այն ելք չունի դեպի ծով: Երկրի բնակչության մեծ մասը երեք ազգությունների ներկայացուցիչներ են՝ ֆրանսիացիներ, գերմանացիներ և իտալացիներ, որոնց համախմբման շնորհիվ էլ ավարտվել է միասնական ազգի ձևավորման գործընթացը: Ո՞րն է այդ պետությունը:

Պատասխան՝ _____:

28. Ո՞ր երկիրն է աշխարհի առաջատարը բրնձի մշակությամբ:

Պատասխան՝ _____:

29. Բնութագրումով որոշել գետը:

Այդ գետը Սյունիքի մարզի ամենամեծ գետն է: Այն աչքի է ընկնում խորը հովտով: Գետի վրա կառուցված է ջրէկների կասկադ: Ո՞րն է այդ գետը:

Պատասխան՝ _____:


30. Բնութագրումով որոշել մարզը:

ՀՀ այդ մարզը արևմուտքից սահմանակցում է Լոռու մարզին: Ընդերքը հարուստ է բենթոնիտային կավի, մարմարի, ածխի պաշարներով: Մարզում լայն տարածում ունեն սողանքները: Այդ մարզի նշանավոր պատմական հուշարձաններից են Գոշավանքն ու Հաղարծինի վանքը: Անասնապահության առաջատար ճյուղը խոզաբուծությունն է: Ո՞րն է այդ մարզը:

Պատասխան՝ _____:

31. Քարտեզի վրա Ա տառով ո՞ր լեռնաշղթան է նշված:

Պատասխան՝ _____:



32. Քարտեզի վրա Բ տառով ո՞ր մարզն է նշված:

Պատասխան՝ _____:

33. Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 640 մմ է, իսկ գագաթին՝ 360 մմ: Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

34. Օրվա ընթացքում օդի ջերմաստիճանը տատանվում է՝ մերթ քարձրանում է, մերթ՝ իջնում: Հիմնավորել, թե ինչու անամպ օրերին սովորաբար օդի ամենաբարձր ջերմաստիճանը լինում է կեսօրից 2-3 ժամ հետո:

35. Հիմնավորել, թե ինչու Հայաստանի Հանրապետության գետերը նավարկելի չեն:

ԹԵՍ 4

1. Աշխարհագրական երկայնությունները լինում են.


- 1) արևմտյան և հարավային
- 2) արևելյան և արևմտյան
- 3) արևելյան և հյուսիսային
- 4) հարավային և հյուսիսային

2. Տրված ապարներից ո՞րն ունի հրային (մագմային) ծագում:

- 1) քարածուխ
- 2) կավ
- 3) բազալտ
- 4) ավազ

3. Նկարում ո՞ր թվով նշված վայրում է մթնոլորտային ճնշումը ամենացածրը:

մթնոլորտի վերին սահման



- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4

4. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Երկրագնդի միջնապատյանից ներքև տարածվում է երկրակեղևը:
- 2) Մայրցամաքային երկրակեղևն ավելի բարակ է, քան օվկիանոսայինը:
- 3) Ավազը և կավը հրային (մագմային) ապարներ են:
- 4) Երկրակեղևում այն ուղին, որով բարձրանում է մագման կոչվում է հրաբխի մղանցք:

5. Տրված «մայրցամաք-լեռներ» զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Աֆրիկա - Կապի
- 2) Հարավային Ամերիկա - Դրակոնյան
- 3) Հյուսիսային Ամերիկա - Կարպատներ
- 4) Եվրասիա - Անդեր

6. Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն (լեռնագագաթ, գետ, լիճ) են գտնվում Եվրասիայում:

- 1) Մոնբլան, Օրինոկո, Միչիգան
- 2) Ակոնկագուա, Յանցզի, Տանգանիկա
- 3) Էլբրուս, Գանգես, Բալխաշ
- 4) Կամերուն, Օրանժ, Օնեգա

7. Հյուսիսային Ամերիկայի թերակղզիներից որի՞ ափերն են ողողում Խաղաղ օվկիանոսի ջրերը:

- 1) Լաբրադոր
- 2) Ֆլորիդա
- 3) Յուկատան
- 4) Ալյասկա

8. Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Արևմտյան ափերը ողողվում են Կորալյան ծովի ջրերով:
- 2) Մայրցամաքի արևելքում տարածվում է Մեծ Զրբաժան լեռնաշղթան:
- 3) Նոր Գվինեա կղզուց բաժանվում է Բասի նեղուցով:
- 4) Ամենացածր կետը Ասալի իջվածքն է:

9. Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Արևմուտքում, Գվինեական ծովածոցի մոտ վեր է բարձրանում Կամերուն հրաբուխը:
- 2) Բաբ-էլ-Մանդեբի նեղուցով բաժանվում է Մադագասկարից:
- 3) Հարավ-արևելքում տարածվում են Ատլասի լեռները:
- 4) Ամենացածր կետը Մեռյալ ծովի իջվածքն է:

10. Տրված «ժողովուրդ-կրոն» զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) չինացիներ - հուդայականություն
- 2) հրեաներ - բուդդայականություն
- 3) ճապոնացիներ -սինտոիզմ
- 4) մոնղոլներ - մահմեդականություն

11. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ջարգացած եվրոպական երկրները պատկանում են բնակչության վերարտադրության երկրորդ տիպին:
- 2) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներում գերակշռում է բնակչության բնական աճի բարձրացմանն ուղղված ժողովրդագրական քաղաքականությունը:
- 3) Բնակչության ընդհանուր թվում կանանց թվաքանակը մեծ է շինաստանում և Հնդկաստանում:
- 4) Աշխարհում յուրաքանչյուր նորածին տղայի հաշվով ծնվում է 105-106 աղջիկ:

12. Քարտեզում ո՞ր լեզվի տարածման արեալն է նշված 4 թվին համապատասխան գույնով:



- 1) իսպաներեն
- 2) անգլերեն
- 3) իտալերեն
- 4) ֆրանսերեն

13. Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Հետարդյունաբերական երկրների համախառն ազգային եկամտի կառուցվածքում գերակշռում են սպասարկման ոլորտի ճյուղերը:
- 2) Նյութական արտադրության ոլորտի ճյուղերից են գյուղատնտեսությունն ու բեռնատար տրանսպորտը:
- 3) Աշխատանքի աշխարհագրական բաժանումը խոչընդոտում է տարածքների արտադրական մասնագիտացմանը:
- 4) ՀՆԱ-ի ցուցանիշը բարձր է զարգացած երկրներում:

14. Ո՞ր զույգ երկրներն են առաջատար բրնձի մշակությամբ:

- 1) ԱՄՆ-ը և Ռուսաստան
- 2) Ավստրալիա և Բրազիլիա
- 3) Կանադա և Մեքսիկա
- 4) Չինաստան և Հնդկաստան

15. Ընտրել «պետություն - մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտը:

- | | |
|-----------------|---------------|
| 1. Դանիա | ա. Բեռլին |
| 2. Գերմանիա | բ. Ամստերդամ |
| 3. Նիդերլանդներ | գ. Կոպենհագեն |
| 4. Շվեյցարիա | դ. Բեռն |

- 1) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ
- 2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 3) 1-ա, 2-դ, 3-գ, 4-բ
- 4) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ

16. Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Պարսիկներից հետո Իրանում բնակվող մեծաթիվ ժողովուրդներից են ադրբեջանցիները և քրդերը:
- 2) Հավատացյալ բնակչության 90 %-ը դավանում է մահմեդականության շիա ուղղությունը:
- 3) Արևելյան շրջաններն ավելի խիտ են բնակեցված, քան արևմտյան շրջանները:
- 4) Բնակչության բնական աճը բավականին բարձր է:

17. Արևմտյան եվրոպայի վերաբերյալ տրված է 2 պնդում:

- Ա) Բնակչության մեծ մասը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի սլավոնական լեզվախմբին:
- Բ) Ցածր է բնակչության բնական աճի ցուցանիշը:

Որոշել տրված պնդումների ճիշտ կամ սխալ լինելը:

- 1) Ա-ն և Բ-ն սխալ են
- 2) Ա-ն և Բ-ն ճիշտ են
- 3) Ա-ն ճիշտ է, Բ-ն՝ սխալ
- 4) Ա-ն սխալ է, Բ-ն՝ ճիշտ

18. Ֆրանսիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Հարավում ափերը ողողում են Միջերկրական ծովի ջրերը:
- 2) Աշխարհի առաջատար երկրներից է նավթի և բնական գազի հանույթով:
- 3) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետարդյունաբերական փուլում:
- 4) Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ մեծ է աէկ-ների բաժինը:

19. Տրված «լեռնաշղթա - լեռնագագաթ» զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Զանգեզուրի - Կապուտջուղ
- 2) Բազումի - Թեժլեռ
- 3) Գուգարաց - Աժդահակ
- 4) Փամբակի - Ծղուկ

20. ՀՀ բնակչության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) ՀՀ-ն ազգային կազմով բազմազգ պետություն է:
- 2) Բնակչության ընդհանուր թվում մեծ է կանանց բաժինը՝ 52%:
- 3) Թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են:
- 4) Ներկայումս գյուղերում է ապրում բնակչության մոտ 70% -ը:

21. ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Քիմիական արդյունաբերությանը բնորոշ է ցրված տեղաբաշխումը:
- 2) Փայտամշակման տեխնոլոգիական շղթան ամբողջական է՝ մեխանիկական մշակումից մինչև փայտաքիմիա և ցելյուլոզի արտադրություն:
- 3) Ալյումինի արդյունաբերության զարգացմանը նպաստել է Սևան-Հրազդան ջրէկ-ների կասկադի կառուցման շնորհիվ առաջացած ավելցուկային էլեկտրաէներգիան:
- 4) Սետաղածուլության առաջատար ենթաճյուղը սև մետաղածուլությունն է:

22. Ի՞նչն է ընդհանուր Սյունիքի և Վայոց ձորի մարզերի համար:

- 1) Գերակշռում են մակերևույթի հարթ ձևերը:
- 2) Հարուստ են մետաղային օգտակար հանածոներով:
- 3) Արևմուտքում սահմանակից են Նախիջևանի ԻՂ-ին:
- 4) Բնակչության մեծ մասը ապրում է քաղաքներում:

23. Լրացնել բաց թողնված բառը:

Երկրի մակերևույթով անցնող և բևեռները միացնող երևակայական կիսաշրջագիծը կոչվում է _____:

24. Բնութագրումով որոշել կլիմայի տիպը:

Կլիմայի այդ տիպը ձևավորվում է ծովերից և օվկիանոսներից հեռու, ցամաքների վրա և բնորոշվում է ջերմաստիճանի մեծ տատանումներով: Կլիմայի այդ տիպն ունեցող տարածքներում տարվա ընթացքում տեղումները թափվում են խիստ անհավասարաչափ: Ո՞րն է կլիմայի այդ տիպը:

Պատասխան՝ _____:

25. Լրացնել բաց թողնված բառը:

Եթե պետության կազմում կան սահմանափակ պետական անկախություն ունեցող պետական կազմավորումներ, որոնցից յուրաքանչյուրի տարածքում համապետական օրենքներից ու կենտրոնական իշխանության մարմիններից բացի, գործում են տեղական օրենքներ և իշխանության մարմիններ, ապա այդ պետությունն ունի _____ կառուցվածք:

26. Լրացնել բաց թողնված բառը:

Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումն ըստ բնակավայրերի և դրանց համակարգերի, կոչվում է _____:

27. Բնութագրումով որոշել պետությունը:

Եվրոպական այդ պետության տարածքում է գտնվում Ալպերի հարավային մասը: Ափերն արևելքից ողողվում են Ադրիատիկ ծովի ջրերով: Բնակչության գերակշիռ մասը դավանում է կաթոլիկություն: Տնտեսության առաջատար ճյուղերից է միջազգային զբոսաշրջությունը: Ո՞րն է այդ պետությունը:

Պատասխան՝ _____:

28. Ո՞ր երկիրն է աշխարհի առաջատարը նավթի պաշարներով:

Պատասխան՝ _____:

29. Բնութագրումով որոշել լիճը:

Այդ լիճը Սևանից հետո ՀՀ ամենախոշոր ջրավազանն է: Այն գտնվում է ծովի մակարդակից 2020 մ բարձրության վրա: Լճի ելքի մոտ՝ Ախուրյան գետի վրա, կառուցվել է 10 մ բարձրությամբ պատնեշ, որի շնորհիվ բարձրացել է լճի մակարդակը: Ո՞րն է այդ լիճը:

Պատասխան՝ _____:


30. Բնութագրումով որոշել մարզը:

ՀՀ այդ մարզը արևելքից սահմանակից է Կոտայքի մարզին: Բնակչության մեծ մասը ապրում է գյուղական բնակավայրերում: Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է: Արդյունաբերության ճյուղային կառուցվածքում գերակշռում են ոգելից խմիչքի (գինի, կոնյակ), կաթնամթերքի, շինանյութերի արտադրությունները: Ո՞րն է այդ մարզը:

Պատասխան՝ _____:

31. Քարտեզի վրա Ա տառով ո՞ր լեռնաշղթան է նշված:

Պատասխան՝ _____:



32. Քարտեզի վրա Բ տառով ո՞ր մարզն է նշված:

Պատասխան՝ _____:

33. Ժամը քանիսը կլինի 2-րդ ժամային գոտում գտնվող բնակավայրում, եթե Լոնդոնում ժամը 11⁰⁰-ն է:

34. Բրիզը մեղմ քամի է, որը դիտվում է ջրավազանների ավերին և օրվա ընթացքում երկու անգամ փոխում է ուղղությունը: Ցերեկն այն փչում է ջրային ավազանից դեպի ցամաք, գիշերը՝ ցամաքից դեպի ջրային ավազան: Բացատրել բրիզ քամու ուղղության փոփոխության պատճառը:

35. Աֆրիկա աշխարհամասի զարգացման համար կարևոր նշանակություն ունեն գետերը, որոնց դերը մեծ է և՛ որպես տրանսպորտային ուղի, և՛ որպես ոռոգման աղբյուր: Միևնույն ժամանակ, Աֆրիկայի ամենաջրառատ Կոնգո գետի ջրերը ոռոգման նպատակով գրեթե չեն օգտագործվում: Հիմնավորել, թե ինչու:

1. Աշխարհագրական լայնությունները լինում են.

- 1) 0° - 90°
- 2) 0° - 180°
- 3) 0° - 270°
- 4) 0° - 360°

2. Ո՞րն է ամենափոքր մայրցամաքը:

- 1) Աֆրիկա
- 2) Անտարկտիդա
- 3) Ավստրալիա
- 4) Հարավային Ամերիկա

3. Օվկիանոսներում ջրի հսկայական զանգվածների հորիզոնական տեղափոխությունը կոչվում է.

- 1) ալիքավորում
- 2) օվկիանոսային հոսանք
- 3) ալեկոծություն
- 4) տոռնադո

4. Ո՞ր քամիների սխեման է պատկերված:

- 1) բրիզներ
- 2) մուսսոններ
- 3) պասսատներ
- 4) լեռնահովտային քամիներ



5. Ո՞ր բնական զոնային են բնորոշ կրծողները, թռչուններն ու գիշատիչները:

- 1) տափաստաններ
- 2) անապատներ
- 3) սավանաներ
- 4) բարեխառն գոտու անտառներ

6. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Երկրագնդի ամենաջրառատ գետը Միսիսիպին է:
- 2) Նիգեր գետը երկու անգամ հատում է հասարակածը:
- 3) Երկրագնդի ամենախորը լիճը Բալխաշն է:
- 4) Երկրագնդի քաղցրահամ խոշոր լճերից ամենաբարձրադիրը Տիտիկական է:

7. Ինչպե՞ս են կոչվում Ավստրալիայի չոր գետահունները:

- 1) վադիներ
- 2) գրաբեններ
- 3) կրիկներ
- 4) օազիսներ

8. Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հարավային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
- 2) Մեքսիկական ծոցի ջրերը ողողում են Ֆլորիդա և Յուկատան թերակղզիների ափերը:
- 3) Մայրցամաքի ամենաընդարձակ դաշտավայրը Լա Պլատայինն է:
- 4) Արևմտյան ափերի երկայնքով ձգվում են Ապալաչյան լեռները:

9. Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն (լեռներ, գետ, լիճ) են գտնվում Աֆրիկայում:

- 1) Դրակոնյան, Ջամբեզի, Իսսիկ-Կուլ
- 2) Մեծ Զրբաժան, Յուկոն, Տանգանիկա
- 3) Կապի, Նիգեր, Նյասա
- 4) Ապենինյան, Մեկոնգ, Էյր

10. Տրված «ժողովուրդ- լեզվախումբ» զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) իտալացիներ - գերմանական
- 2) անգլիացիներ - ռոմանական
- 3) պարսիկներ - թուրքական
- 4) ռուսներ - սլավոնական

11. Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Նավթի համաշխարհային պաշարների 9/10-ը կենտրոնացված է զարգացած երկրներում:
- 2) Էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության մեծ մասը բաժին է ընկնում զարգացող երկրներին:
- 3) Աշխարհի ջրաէներգետիկ ռեսուրսներով հարուստ երկրներից են Բրազիլիան և Չինաստանը:
- 4) Ածխի պաշարներով աշխարհի առաջատար երկրներն են ճապոնիան և ֆրանսիան:

12. Տրված երկրներից ո՞րն է ոչխարաբուծությամբ աշխարհի առաջատարներից:

- 1) Ռուսաստան
- 2) Ավստրալիա
- 3) ԱՄՆ
- 4) Բրազիլիա


13. Տրված «մշակաբույս - առաջատար երկիր» զույգերից ո՞րն է սխալ:

- 1) բրինձ - Չինաստան
- 2) շաքարի ճակնդեղ – Ռուսաստան
- 3) սուրճ - Բրազիլիա
- 4) բամբակ – ճապոնիա

14. «Տարածաշրջան - պետություն» զույգերից ո՞րն է ճիշտ:

- 1) Արևմտյան Եվրոպա - Գերմանիա
- 2) Հյուսիսային Եվրոպա - Շվեյցարիա
- 3) Հարավային Եվրոպա - Ֆրանսիա
- 4) Արևելյան Եվրոպա - Ավստրիա

15. Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Վաշինգտոն քաղաքը:



- 1) Ա
- 2) Բ
- 3) Գ
- 4) Դ

16. Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն ճիշտ:

- 1) Բազմազգ երկիր է:
- 2) Կոնֆուցիականությունը և դաոսիզմը երկրի ազգային (տեղական) կրոններն են:
- 3) Բարձր է բնակչության կյանքի միջին տևողությունը:
- 4) Աշխարհի առավել նոսր բնակեցված երկրներից է:

17. Արևմտյան Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Բնակչության թվով ամենամեծ պետությունը Ֆրանսիան է:
- 2) Ժողովուրդների մեծ մասը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքի սլավոնական լեզվախմբին:
- 3) Ցածր է բնակչության բնական աճի ցուցանիշը:
- 4) Ցածր է բնակչության միջին խտության ցուցանիշը:

18. Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետարդյունաբերական փուլում:
- 2) Էլեկտրաէներգիայի արտադրության մեծ մասը բաժին է ընկնում ջրային էլեկտրակայաններին:
- 3) Տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոնը Մանչեստրն է:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնաբուծությունն է:

19. ԳՅ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Տարածքի 60 %-ն ունի 2000 մ և ավելի բարձրություն:
- 2) Վիրահայոց և Գուգարաց լեռնաշղթաները բաժանվում են Աղստև գետի հովտով:
- 3) Տարվա ընթացքում տիրապետում է օդային զանգվածների արևմտյան հոսքը:
- 4) Տեղումների առավելագույն քանակը թափվում է հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

20. Ընտրել «մարզ - քաղաքներ» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|----------------|-------------------------|
| 1. Կոտայք | ա. Ազարակ, Սիսիան |
| 2. Գեղարքունիք | բ. Չարենցավան, Ծաղկաձոր |
| 3. Սյունիք | գ. Ապարան, Թալին |
| 4. Արագածոտն | դ. Ճամբարակ, Մարտունի |

- 1) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 3) 1-դ, 2-բ, 3-ա, 4-գ
- 4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ

21. ԳՅ-ում հողերի մեկտորացիայի գլխավոր տեսակն է (են).

- 1) արհեստական ոռոգումը (հռիգացիա)
- 2) քիմիական մեկտորացիան
- 3) ցամաքեցումը
- 4) հակաէրոզիոն միջոցառումները

22. ԳԳ-ի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Մեքենաշինության զարգացմանը նպաստել է սև մետաղածուլության առկայությունը:
- 2) Քիմիական արդյունաբերությունն աչքի է ըկնում համատարած տեղաբաշխմամբ:
- 3) Գյուղատնտեսության ապրանքային նշանակության ճյուղերն են կարտոֆիլագործությունն ու հացահատիկային տնտեսությունը:
- 4) Անասնապահական արտադրանքի ավելի քան կեսը բաժին է ընկնում խոշոր եղջերավոր անասնապահությանը:

23. Լրացնել բաց թողնված բառը:

Երկրակեղևի կայուն, ընդարձակ հարթ տեղամասերը, որոնք բնորոշվում են կարծր ապարներից կազմված ծալքավոր հիմքով, կոչվում են _____:

24. Բնութագրումով որոշել օդային զանգվածի տիպը:

Այդ օդային զանգվածները ձևավորվում են 20⁰-40⁰ աշխարհագրական լայնություններում: Դրանց ծովային տարատեսակը բնորոշվում է բարձր ջերմությամբ և խոնավությամբ, իսկ ցամաքայինը՝ բարձր ջերմությամբ, չորությամբ և փոքր թափանցիկությամբ: Ո՞ր օդային զանգվածներն են:

Պատասխան՝ _____:

25. Լրացնել բաց թողնված բառը:

Համաշխարհային կրոններն են քրիստոնեությունը, մահմեդականությունը և _____ը:

26. Բնութագրումով որոշել տրանսպորտի ենթաճյուղը:

Տրանսպորտի այդ ենթաճյուղի դերը վերջին տասնամյակների ընթացքում նվազել է: Այդուհանդերձ, այդ ենթաճյուղը մեծ կարևորություն ունի մեծ ծավալի ու քանակի բեռների փոխադրման գործում: Դրանով են իրականացվում համաշխարհային բեռնաշրջանառության 11 %-ը և ուղևորաշրջանառության 9 %-ը: Ո՞րն է տրանսպորտի այդ ենթաճյուղը:

Պատասխան՝ _____:

27. Լրացնել բաց թողնված բառը:

ԱՄՆ-ում նավթի հանույթը կատարվում է Միսիսիպիի դաշտավայրում, _____ ծոցի ծանծաղուտում, Կալիֆոռնիայում և Ալյասկայում:

28. Բնութագրումով որոշել երկիրը:

Եվրոպական այդ երկիրը պետական կառուցվածքով ունիտար պետություն է: Ջրաղեցրած տարածքով ամենամեծն է Արևմտյան Եվրոպայում: Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ մեծ բաժին ունեն ատոմային էլեկտրակայանները: Հայկական համայնքի մեծությամբ աշխարհի երրորդ երկիրն է: Ո՞րն է այդ երկիրը:

Պատասխան՝ _____:

29. Բնութագրումով որոշել կլիմայի տիպը:

Կլիմայի այդ տիպը ձևավորվում է Արարատյան դաշտի մինչև 1000 մ բարձրություններում: Ձմեռը ցուրտ է, հունվարյան միջին ջերմաստիճանը -3° - 4° C է: Ամառը տևական է, շոգ և չորային: Ո՞րն է կլիմայի այդ տիպը:

Պատասխան՝ _____:


30. Բնութագրումով որոշել մարզը:

ՀՀ այդ մարզը սահմանակից է Թուրքիային և Վրաստանին: Մարզկենտրոնը հանրապետության երկրորդ խոշոր քաղաքն է: Հարուստ է շինանյութերի՝ տուֆի, պեմզայի, կրաքարի, բազալտի պաշարներով: Ո՞րն է այդ մարզը:

Պատասխան՝ _____:

31. Քարտեզի վրա Ա տառով ո՞ր սարահարթն է նշված:

Պատասխան՝ _____:



32. Քարտեզի վրա Բ տառով ո՞ր քաղաքն է նշված:

Պատասխան՝ _____:

33. Երկրի երկաթուղային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 3 մլն տ քեռ: Բեռների փոխադրման միջին հեռավորությունը 210 կմ է: Որքա՞ն կլինի բեռնաշրջանառությունը:

34. Երկրի մակերևույթին մոտ՝ մթնոլորտի երկրամերձ շերտում հաճախ առավոտյան և երեկոյան ժամերին առաջանում է մառախուղ: Մեծ մասամբ մառախուղը ձևավորվում է ջրային ավազանների մոտ: Հիմնավորել, թե ինչպես է առաջանում մառախուղը:

35. ՀՀ-ում հողաբարելավման (մելիորացիայի) տեսակները բազմազան են՝ արհեստական ոռոգում, քիմիական մելիորացում, քարամաքրում, չորացում, հակաէրոզիոն միջոցառումներ: Հիմնավորել, թե ինչու Արարատյան դաշտում հողաբարելավման տեսակներից առավել տարածված է արհեստական ոռոգումը: